

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3**

ք. Երևան

«18» օգոստոսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (Երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2)

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ. Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **647 258 000 (վեց հարյուր քառասունյոթ միլիոն երկու հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ**, որից 107 876 333.3 (մեկ հարյուր յոթ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուն լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փոփոխության և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

<sup>1</sup> Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

## **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը.

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման.

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են՝

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն՝

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք բերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան

համաձայնագրի կնքման միջոցով՝ Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
 կառավարական տուն 3  
 ՀՀ ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի գործառնական վարչություն  
 ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

*Ս.Բ. ԿՈՒՅՈՒՆՅԱՆ*  
 (ստորագրող)



**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

«Գրիգորյան Շին» ՍՊԸ  
 ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշկյան 8փ. տ.92  
 «Հայթիգնեսթանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 1150014101961942  
 ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

*Գրիգորյան*  
 (ստորագրություն) Գ. Գրիգորյան



*[Large handwritten signature]*

*[Three smaller handwritten signatures]*

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱԿԱՇԻՎ\***

**ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
	<b>1.1 Համաշինարարական աշխատանքներ</b>				
	<b>Հողային աշխատանքներ</b>				
1	V-րդ կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով	խմ	2415	6,500 0	15,697,500 0
2	Փխրեցված V-րդ կարգի գրունտի մշակում 0.65 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	խմ	2415	1,700.0	4,105,500 0
3	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	2415	750 0	1,811,250 0
4	Փոստրակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	50	5,000.0	250,000 0
5	Հետիցքի համար պահանջվող գրունտի մշակում հանքավայրում էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	խմ	1915	1,000 0	1,915,000.0
6	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	1915	750 0	1,436,250 0
7	Գրունտի ետիցք հատակների տակ բուլդոզերով	խմ	1835	450.0	825,750.0
8	Գրունտի աստիճանաբար տոփանում օղանշական ձեռքի տոփանիչով	խմ	1835	350.0	642,250 0
9	Գրունտի ետիցք հիմքերի ծոց ձեռքով, տոփանումով	խմ	130	3,500 0	455,000.0
	<b>Ընդամենը հողային աշխատանքներ</b>				<b>27,138,500 0</b>
	<b>Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր</b>				
10	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7.5 դասի բետոնով	խմ	249	35,400 0	8,814,600 0
11	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7.5դասի բետոնով	խմ	70.5	35,400.0	2,495,700.0
12	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	287 95	81,000 0	23,323,950.0
13	Ամրան Փ8A240C	տն	7 121	346,000 0	2,463,866.0
14	Ամրան Փ16A500C	տն	5 572	340,000.0	1,894,582.0
15	Ամրան Փ18A500C	տն	4 442	340,000.0	1,510,144 0
16	Ամրան Փ25A500C	տն	0.115	340,000 0	39,168.0
17	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5 1	82,000.0	418,200.0
18	Ամրան Փ8A240C	տն	0 510	346,000 0	176,460 0
19	Ամրան Փ22A500C	տն	1 742	340,000 0	592,280 0
20	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0 232	421,000 0	97,714 1
21	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ B-20 դասի բետոնով	խմ	169 65	82,000 0	13,911,300 0
22	Ամրան Փ6, 8A240C	տն	1 452	346,000 0	502,426 6
23	Ամրան Փ10A500C	տն	2 599	340,000 0	883,660 0
24	Ամրան Փ12A500C	տն	8 407	340,000 0	2,858,346 0

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
25	Ամրան Փ16A500C	տն	0 431	340.000.0	146,404 0
26	Ամրան Փ22A500C	տն	1 325	340.000 0	450,636 0
27	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0 238	421.000 0	99,987 5
	Ընդամենը Ե/քետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				60,679,424 2
	Ե/քետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից բարձր				
28	Շրջանակների միաձույլ ե/քետոնե սյուների պատրաստում B-20 դասի քետոնով	խմ	59.5	84.000 0	4,998,000.0
29	Ամրան Փ8A240C	տն	2 341	346.000 0	809,982 5
30	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0 050	340.000 0	17,102.0
31	Ամրան Փ22A500C	տն	6 940	340.000 0	2,359,566 0
32	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0 010	421.000 0	4,378 4
33	Շրջանակների միաձույլ ե/քետոնե միջուկների պատրաստում B-20 դասի քետոնով	խմ	0 5	84.000 0	42,000 0
34	Ամրան Փ8A240C	տն	0 023	346.000 0	8,096 4
35	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0 051	340.000.0	17,408.0
36	Շրջանակների միաձույլ ե/ք պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի քետոնով	խմ	10.20	84.000 0	856,800.0
37	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի քետոնով	խմ	123 42	84.000.0	10,367,280 0
38	Ամրան Փ6, 8A240	տն	3.220	346.000 0	1,114,275 7
39	Ամրան Փ8A500C	տն	0 643	340.000 0	218,518 0
40	Ամրան Փ12A500C	տն	1.797	340.000 0	611,034.4
41	Ամրան Փ16A500C	տն	1 497	340.000 0	508,810 0
42	Ամրան Փ18A500C	տն	4.019	340.000 0	1,366,494 0
43	Ամրան Փ25A500C	տն	0 092	340.000 0	31,348 0
44	Ամրան Փ28A500C	տն	0 744	340.000 0	252,926.0
45	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0 190	421.000 0	79,990.0
46	Միաձույլ ե/ք գոտիների պատրաստում B-20 դասի քետոնով	խմ	23.14	84.000 0	1,943,760.0
47	Ամրան Փ6, 8A240	տն	0.534	346.000 0	184,902.4
48	Ամրան Փ12A500C	տն	1 357	340.000 0	461,244.0
49	Ամրան Փ18A500C	տն	0 149	340.000 0	50,592.0
50	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սևամեջ քետոնե թուկներով	խմ	149.4	24.300 0	3,630,225.6
51	Նույնի քետոնացում, B-20 դասի քետոնով, ամրանավորումով	խմ	95 53	84.000.0	8,024,520.0
52	Ամրան Փ6, 8A240C	տն	0 724	340.000 0	246,251.8
53	Ամրան Փ10A500C	տն	8.657	340.000 0	2,943,516 0
54	Ամրան Փ12A500C	տն	7.041	340.000.0	2,393,804.0
55	Ամրան Փ16A500C	տն	1 002	340.000 0	340,544 0
56	Միաձույլ ե/ք բարավորների պատրաստում B-12.5 դասի քետոնով	խմ	1 63	75.000 0	122,250.0
57	Ամրան Փ6A240	տն	0 051	346.000 0	17,646.0
58	Ամրան Փ12A500C	տն	0 221	340.000 0	75,140 0
59	Միաձույլ ե/քետոնե ծածկի սալեղի պատրաստում +3.3նիշի վրա B-20դասի քետոնով	խմ	186 5	84.000 0	15,666,000 0
60	Ամրան Փ6,8A240	տն	0.357	346.000 0	123,452 8
61	Ամրան Փ12A500C	տն	16 051	340.000 0	5,457,442 0
62	Ամրան Փ14A500C	տն	5 701	340.000 0	1,938,442 0

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
63	Ամրան Փ18A500C	տն	0.026	340,000 0	8,704 0
64	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	6 80	84,000 0	571,200 0
65	Ամրան Փ8A240	տն	0 184	346,000 0	63,525 6
66	Ամրան Փ18A500C	տն	0 367	340,000.0	124,848 0
67	Միաձույլ ե/բ հովհարի պատրաստում +2.7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1. +հեծան ՄՀ-1)	խմ	1 7	84,000 0	142,800 0
68	Ամրան Փ8A240	տն	0 029	346,000 0	9,930 2
69	Ամրան Փ8A500C	տն	0 073	346,000 0	25,188 8
70	Ամրան Փ12A500C	տն	0 008	340,000.0	2,720 0
71	Ամրան Փ16A500C	տն	0 046	340,000 0	15,640.0
72	Ամրան Փ18A500C	տն	0 015	340,000 0	5,100 0
73	Բետոնե աստիճանների պատրաստում 0.00 նիշից դեպի +0.45նիշ B-7.5 դասի բետոնով	խմ	2.3	35,400.0	81,420 0
74	ՄՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0.45նիշից դեպի +3.3նիշ)	խմ	1 9	84,000.0	159,600 0
75	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	0 5	35,400.0	17,700 0
76	Ամրան Փ8A240	տն	0 055	346,000.0	18,926 2
77	Ամրան Փ16A500C	տն	0 274	340,000 0	93,126 0
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				68,624,170 8
	Միջնորմներ				
78	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397 58	2,900 0	1,152,982 0
79	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	խմ	110 8	24,300 0	2,691,711 0
80	Ամրան Փ8A500C	տն	2 760	346,000 0	954,815 4
	Ընդամենը միջնորմներ				4,799,508 4
	Դռներ և պատուհաններ				
81	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	67,700 0	2,458,024 5
82	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1 92	67,700 0	129,984 0
83	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1 20	67,700 0	81,240 0
84	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17 04	39,600 0	674,784 0
85	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	35,000 0	80,640 0
86	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25 0	30,000 0	750,900 0
87	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-1	հատ	9	71,000 0	639,000 0
88	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-2----Դ-3	հատ	41	68,000 0	2,788,000 0
89	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-4----Դ-4*	հատ	4	120,000 0	480,000 0

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
90	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դրան տեղադրում Դ-5	քմ	17	62.000 0	105,424.8
91	Մետաղական դրան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	3 4	2,300 0	7,820.0
92	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5 3	35.000 0	183,848 0
93	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12 6	38,000 0	478,800 0
94	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	89 3	34.000 0	3,036,540 0
95	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64 2	29,000 0	1,860,988 0
96	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանազդեբրի տեղադրում 200մմ լայնությամբ	զծմ	80 1	3,100 0	248,186 0
	Ընդամենը դռներ և պատուհաններ				14,004,179 3
	Հատակներ				
97	Հողի տոփանում խճաքարով	քմ	1480	500.0	740,000 0
98	Ամրանավորված թետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12.5 դասի թետոնից	խմ	222 0	74.000 0	16,428,000 0
99	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8.3կգ/քմ)	տն	12 3	340,000 0	4,176,560.0
100	Խարամաքետոն 45մմ հաստ B-12.5դասի թեթև թետոնով	քմ	1644 6	1,800 0	2,960,208.0
101	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ քիտումի մածիկի վրա	քմ	1447.8	2,000 0	2,895,560 0
102	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	540 46	1,100 0	594,506 0
103	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ	քմ	1104 1	1,450 0	1,600,945 0
104	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	417.12	13,500.0	5,631,120 0
105	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16 71	13,500.0	225,585 0
106	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	16.71	1,100.0	18,381.0
107	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	զծմ	171 8	32,000 0	5,497,600.0
108	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ ) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	123 34	10,300.0	1,270,402 0
109	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զծմ	80 1	23,000.0	1,842,070.0
110	Վինիլային (հետերոգեն ՊՎԹ 2մմ հաստ 0.7մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	768 4528	7,000.0	5,379,169 6
111	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԹ 4,5մմ հաստ 1մմ հաստ հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257 4352	9,000 0	2,316,916 8
112	Կավրոլինից (4,5մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116 8	5,500 0	642,400 0
113	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34 32	1,450 0	49,764.0
	Ընդամենը հատակներ				52,269,187.4
	Տանիք				
114	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3 681	710,000 0	2,613,368.0

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
115	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ. ամրան Փ12A500C)	տն	0.181	451,000 0	81,584 1
116	Մետաղական ֆերմանների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6 616	710,000 0	4,697,360.0
117	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0 196	451,000 0	88,293.2
118	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	16 043	710,000.0	11,390,530 0
119	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1 137	451,000 0	512,563 3
120	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	27 853	110,000 0	3,063,826 9
121	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1182.7	3,500.0	4,139,511.7
122	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծաեղ, կավառամած)	խմ	30 9	265,000.0	8,188,500 0
123	Նույնի երեսում (տակից) ՕՍՈ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1540 1	5,600 0	8,624,560 0
124	Գոլորշամեկուսիչ շերտի փոում	քմ	1540.1	1,500.0	2,310,150 0
125	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չալովիլ բազալտե հանքաքարային սալերով	քմ	1540 1	2,300 0	3,542,230 0
126	ՕՍՈ սալերի տեղադրում 10մմ հաստ (քիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	1781 1	5,600 0	9,974,160 0
127	Քիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված քիտում 1.3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	1781 1	9,500 0	16,920,450.0
128	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	30 9	8,500 0	262,650 0
129	ՕՍՈ սալի մասնակի լաքապատում	քմ	297 2	1,800.0	534,924.0
130	Ջրիզոլանների պատրաստում 0.5մմ հաստ ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	136 5	5,900 0	805,350 0
131	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	15	2,300 0	34,500 0
132	Ջրիոս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	76.18	8,500 0	647,530 0
133	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0 707	710,000 0	501,970 0
134	Նույնի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0 707	110,000 0	77,770.0
	Ընդամենը տանիք				79,011,781.2
	Հարդարման աշխատանքներ				
135	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2484 24	2,300.0	5,713,752 0
136	Պատերի քարեյավված սվաղ գաջի շաղախով	քմ	313.02	2,300 0	719,946 0
137	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10 13	3,800 0	38,501 6
138	V-2, V-4, V-5 Վիտրաժների վերին մասի լցափակում գիպոսկարտոնե հարթասալերով	քմ	12.9	6,000 0	77,400.0
139	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	891.67	2,300 0	2,050,841 0
140	Առաստաղների քարեյավված սվաղ գաջի շաղախով	քմ	98 22	2,300 0	225,906.0
141	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2516.2	2,100 0	5,284,003 2
142	Պատերի քարեյավված ներկում լատեքսային ներկով	քմ	313 02	2,100 0	657,342 0
143	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1316 39	2,100 0	2,764,419 0

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
144	Առաստաղների բարելավված ներկում լատեկսային ներկով	քմ	43 04	2,100 0	90,384 0
145	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	364 66	1,900 0	692,854 0
146	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	301 16	9,000 0	2,710,440 0
147	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9,5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	424 72	6,000 0	2,548,320.0
148	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզոն ական	332	1,600 0	531,200 0
149	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	55 18	5,000 0	275,900.0
150	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0 593	710,000.0	420,939 1
151	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0 593	110,000.0	65,215.9
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				24,867,363 8
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
152	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	30 3	6,400 0	193,920 0
153	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	17 5	35,000 0	612,500 0
154	Բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	12.2	35,000.0	427,000.0
155	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	7 82	21,000 0	164,220.0
156	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով	քմ	50.61	19,000 0	961,590 0
157	Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	7 8	7,000 0	54,600 0
158	Նույնի, միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	1 2	35,400 0	42,480 0
159	Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	3 7	35,400.0	130,980 0
160	Նույնի, միաձույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստությամբ B-12.5 դասի բետոնով	խմ	0 6	75,000.0	45,000 0
161	Ամրան Փ10A500C	տն	0 05	340,000 0	17,000 0
